Կարգապահական գործ թիվ ԿԳ-17064

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2018 թվականի ապրիլի 03-ի թիվ 81-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/60-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՏԻԳՐԱՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԵՎ ԱՐԱՅԻԿ ՊԱՊԻԿՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Հրանտ Անանյանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Հարություն Հարությունյանի, Նելլի Հարությունյանի Կարեն Սարդարյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Տիգրան Հայրապետյանին (արտոնագիր թիվ 159) և Արայիկ Պապիկյանին (արտոնագիր թիվ 970) (**այսուհետ նաև՝ Պատասխանող կամ Պատասխանողներ**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

10.07.2017թ. Պալատում մուտքագրվել է Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (**այսուհետ նաև՝ Դատարան կամ Դիմող**) դատավոր Տաթևիկ Գրիգորյանի՝ «Դատական սանկցիա կիրառելու մասին» 30.06.2017թ. որոշումը (**այսուհետ նաև՝ Որոշում**), որում նշվել է, որ թիվ ԵԱԴԴ/0028/01/17 քրեական գործով գործի քննության ողջամիտ ժամկետները որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ և հիմնարար իրավական արժեք ապահովելու անհրաժեշտությունից ելնելով, դատավարության մասնակիցների հետ համաձայնեցվել և 2017թ. մայիսի 26-ի դատական նիստում որոշվել է հիշյալ քրեական գործով դատական նիստերը նշանակել յուրաքանչյուր երեքշաբթի և ուրբաթ օրերին ժամը 12:30-ին: Դատավարության մասնակիցների, այդ թվում ամբաստանյալ Ժիրայր Սեֆիլյանի պաշտպան Տիգրան Հայրապետյանի և ամբաստանյալ Ներսես Պողոսյանի պաշտպան Արայիկ Պապիկյանի կողմից առարկություն չի ներկայացվել:

2017թ. հունիսի 30-ի դատական նիստում Դատարանը որոշում է կայացրել ամբաստանյալ Ժիրայր Սեֆիլյանի և Ներսես Պողոսյանի նկատմամբ դատական սանկցիա կիրառելու մասին, և ամբաստանյալներ Ժիրայր Սեֆիլյանն ու Ներսես Պողոսյանը հեռացվել են դատական նիստերի դահլիճից տասը ժամ ժամանակով, որից հետո դատարանը հեռացել է խորհրդակցական սենյակ՝ ամբաստանյալ Գևորգ Սաֆարյանի պաշտպան Տիգրան Եգորյանի դրսևորած վարքագծի վերաբերյալ որոշում կայացնելու համար և հայտարարվել է, որ որոշումը կհրապարակվի նույն օրը ժամը 16:30-ին, նույն դատական նիստերի դահլիճում:

Ամբաստանյալ Ժիրայր Սեֆիլյանի պաշտպան Տիգրան Հայրապետյանը և ամբաստանյալ Ներսես Պողոսյանի պաշտպան Արայիկ Պապիկյանը դատական նիստին ներկա չեն եղել, իսկ չներկայանալու հարգելի պատճառների մասին որևէ փաստաթուղթ դատարանին չեն ներկայացրել:

Որոշմամբ Դատարանը գտել է, որ փաստաբաններ Տիգրան Հայրապետյանը և Արայիկ Պապիկյանը չարամտորեն խուսափել են 2017թ. հունիսի 30-ի ժամը 16:30-ին նշանակված դատական նիստին ներկայանալուց և առանց որևէ հարգելի պատճառի չեն կատարել քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով ներկայանալու իրենց դատավարական պարտականությունը, ինչով անհարգալից վերաբերմունք են դրսևորել դատարանի նկատմամբ: Դատարանը նաև նշել է, որ տվյալ դեպքում դատական նիստին չներկայանալու հարգելի պատճառների մասին պաշտպանները պարտավոր էին նախապես տեղեկացնել դատարանին, ինչը չեն կատարել և իրենց վարքագծով զրկել են նաև դատարանին պաշտպանների բացակայությունը հարգելի գնահատելու հնարավորությունից:

Դատարանը 30.06.2017թ. կայացրել է «Դատական սանկցիա կիրառելու մասին» որոշում, որով որոշել է *փաստաբաններ Տիգրան Հայրապետյանի և Արայիկ Պապիկյանի նկատմամբ կիրառել դատական սանկցիա՝ պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով դիմելով փաստաբանական պալատ:*

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 10.08.2017թ. թիվ 229-Ա/ԿԳ-17064 որոշմամբ փաստաբաններ Տիրգրան Հայրապետյանի և Արայիկ Պապիկյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ ‹‹Փաստաբանության մասին›› ՀՀ օրենքի (**այսուհետ նաև՝ Օրենք**) 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ նաև՝ Կանոնագիրք**) 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով:

Կարգապահական գործը 14.08.2017թ. հանձնվել է կարգապահական գործ նախապատրաստող անձ Նարինե Սարգսյանին:

3. <u>Դիմողի և Պատասխանողների համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

3.1. <u>Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

Կարգապահական գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը ներկայացրել է թիվ ԵԱԴԴ/0028/01/17 քրեական գործով 30.06.2017թ. դատական նիստի ձայնագրառման կրիչը: Դիմողը Խորհրդի նիստին չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցվել է նիստի ժամանակի և վայրի մասին:

<u>3.2. Պատասխանողների համառոտ բացատրությունը.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում Պատասխանողները բացատրություն չեն ներկայացրել:

19.02.2018թ. բացատրություն է ներկայացրել Պատասխանող Տիգրան Հայրապետյանը: Վերջինս հայտնել է, որ դատավորը չի համաձայնացրել դատական նիստի օրերը դատավարության մասնակիցների հետ և որ իր չներկայանալը կապված է եղել իր պաշտպանյալի դիրքորոշման հետ և կապված չէ դատարանի նկատմամբ անհարգելի վերաբերմունքի դրսևորման հետ: Պատասխանողը նշել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ և «Դատական օրենսգրքի» 63-րդ հոդվածներից հետևում է. որ դատարանը կարող է սանկցիա կիրառել բացառապես դատական նիստին ներկա գտնվող անձանց նկատմամբ մինչդեռ տվյալ դեպքում ինքը չի ներկայացել դատական նիստին և դատավորը իրավասու չէր նիստին ներկա չգտնվող անձի նկատմամբ դատական սանկցիա կիրառել, բացի այդ իր չներկայանալը չի ազդել դատական նիստի բնականոն ընթացքի վրա, քանի որ դատավորը հանգիստ շարունակել է դատական նիստը:

Պատասխանողներ Տիրգրան Հայրապետյանը և Արայիկ Պապիկյանը 07.12.2017թ. խորհրդի նիստին ներկայացել են և հայտնել են հետևյալը՝

Դատավոր Տ. Գրիգորյանը փաստաբաններ Արայիկ Պապիկյանին և Տիգրան Հայրապետյանին չի դիտել որպես պաշտպան, և ի հիմնավորումը նշված փաստարկի 20.02.2018թ Խորհրդի նիստին Պատասխանող Տիգրան Հայրապետյանը ներկայացրել է դատական նիստի արձանագրությունները, որոնց համաձայն՝ ինքը պաշտպանի կարգավիճակ է ձեռք բերել հունիսի 30-ից հետո՝ հոկտեմբերի 13-ին և հայտնել, որ պարտականություն չի ունեցել ներկայանալու դատական նիստին, քանի որ ներգրավված չի եղել որպես պաշտպան:

03.04.2017թ. խորհրդի նիստին Պատասխանողները չեն ներկայացել, թեև պատշաճ տեղեկացվել են Խորհրդի նիստի ժամանակի և վայրի մասին:

<u>3.3. Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական վարույթի շրջանակներում վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

11.10.2017թ. կարգապահական վարույթի գործը նախապատրաստող անձը կազմել է եզրակացություն:

07.03.2017թ. գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2017 թվականի դեկտեմբերի 07-ին, ժամը՝ 18:30-ին, 2018 թվականի փետրվարի 20-ին, ժամը՝ 19:00-ին, 2018 թվականի ապրիլի 03-ին, ժամը՝ 20:00-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (**այսուհետ նաև՝ Կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

- Թիվ ԵԱԴԴ/0028/01/17 քրեական գործով 2017թ. հունիսի 30-ի դատական նիստում Դատարանը որոշում է կայացրել ամբաստանյալ Ժիրայր Սեֆիլյանի և Ներսես Պողոսյանի նկատմամբ դատական սանկցիա կիրառելու մասին, և ամբաստանյալներ Ժիրայր Սեֆիլյանն ու Ներսես Պողոսյանը հեռացվել են դատական նիստերի դահլիճից տասը ժամ ժամանակով, որից հետո դատարանը հեռացել է խորհրդակցական սենյակ՝ ամբաստանյալ Գևորգ Սաֆարյանի պաշտպան Տիգրան Եգորյանի դրսևորած վարքագծի վերաբերյալ որոշում կայացնելու համար և հայտարարվել է, որ որոշումը կհրապարակվի նույն օրը ժամը 16:30-ին, նույն դատական նիստերի դահլիճում:
- Ամբաստանյալ Ժիրայր Սեֆիլյանի պաշտպան Տիգրան Հայրապետյանը և ամբաստանյալ Ներսես Պողոսյանի պաշտպան Արայիկ Պապիկյանը ժամը 16:30-ին դատական նիստին չեն ներկայացել, իսկ չներկայանալու հարգելի պատճառների մասին որևէ փաստաթուղթ դատարանին չեն ներկայացրել:
- Փաստաբան Տիգրան Հայրապետյանը թիվ ԵԱԴԴ/0028/01/17 քրեական գործով ներգրավվել է որպես պաշտպան 13.10.2017թ.:

Նշված փաստերը հաստատվում են գործում առկա ապացույցներով, այդ թվում՝ Որոշմամբ, դատական նիստի ձայնագրառման կրիչով, 13. 10. 2017թ. դատական նիստի արձանագրությամբ:

6. <u>Պատասխանողների անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքների համաձայն՝

փաստաբան Տիգրան Հայրապետյանի (արտոնագիր 159, ստացված՝ 21.09.2005թ.) նկատմամբ 2005-2018թթ. ընկած ժամանակահատվածում 8 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (4 ավարտված վարույթ և 4 ընթացիկ վարույթ):

փաստաբան Արայիկ Պապիկյանի (արտոնագիր 970, ստացված՝ 24.10.2009թ.) նկատմամբ 2015-2018թթ. ընկած ժամանակահատվածում 22 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (11 ավարտված վարույթ և 11 ընթացիկ վարույթ):

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը ստորև նշված պատճառաբանությամբ գտնում է, որ՝

- փաստաբան Տիգրան Հայրապետյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման.

- փաստաբան Արայիկ Պապիկյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման համար, իսկ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջների խախտման մասով կարգապահական վարույթը ենթակա է կարճման.

7.1 Կանոնագրքի 4.1 կետի խախտման մասով.

Օրենքի 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Կանոնագրքի 4.1 կետի համաձայն՝ *փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:*

Նշված կանոնը նաև վկայակոչող (բլանկետային) է, քանի որ հղում է կատարում փաստաբանի և դատարանի փոխհարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտին, տվյալ դեպքում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ **պաշտպանը պարտավոր է կասկածյալին և մեղադրյալին իրավաբանական օգնություն ցույց տալու համար ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով**:

Վերլուծելով վերը նշված կանոնների պահանջները, Խորհուրդը գտնում է, որ սույն գործով պարզման ենթակա է այն հանգամանքը, թե.

արդյո՞ք Պատասխանողներն *առանց հարգելի պատճառի դատական նիստին չի ներկայացել՝ դրանով անհարգալից վերաբերմունք դրսևորելով Դատարանի նկատմամբ*:

Ըստ հաստատված փաստերի, թիվ ԵԱԴԴ/0028/01/17 քրեական գործով 30.06.2017թ. դատական նիստում ամբաստանյալ Գևորգ Սաֆարյանի պաշտպան Տիգրան Եգորյանի դրսևորած վարքագծի վերաբերյալ որոշում կայացնելու համար հայտարարված ընդմիջումից հետո վերսկսված դատական նիստին Պատասխանողները չեն մասնակցել: Պալատի Խորհուրդը փաստաբան Արայիկ Պապիկյանի և Տիգրան Հայրապետյանի՝ առանց հարգելի պատճառի դատական նիստին չներկայանալու վարքագիծը քննարկելիս, ուսումնասիրության առարկա է դարձնում նաև այդ վարքագծի դրսևորման պատճառները:

Խորհուրդը հիշեցնում է, որ փաստաբանը, ունենալով առանձնահատուկ հասարակական կարգավիճակ, ունի իրավական և բարոյական պարտականությունների լայն շրջանակ: Փաստաբանը՝ որպես իրավապաշտպան գործունեություն իրականացնող անձ, իրավունք ունի և պարտավոր է բարեխղճորեն պաշտպանել իր վստահորդների իրավունքներն ու օրինական շահերը՝ օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով: Հետևաբար փաստաբանի պարտականությունների հասցեատերերը ոչ միայն վստահորդներն են, այլև արդարադատության գործառույթ իրականացնող մարմինները՝ դատարանները: Փաստաբանի այս երկակի կարգավիճակը բխում է Կանոնագրքի 1.1 ենթակետի պահանջներից, որի համաձայն՝ փաստաբանը կոչված է ծառայել արդարադատության շահերին ինչպես նաև այն իրավունքներին ու արտոնություններին, որոնք նրան վստահել են պաշտպանելու իր վստահորդի շահերը:

Հաշվի առնելով փաստաբանի գործառույթների և դրանցից բխող պարտականությունների բազմազան բնույթը՝ ՀՀ օրենսդրությամբ և Կանոնագրքով սահմանված են փաստաբանի այն հիմնական պարտականությունները, որոնք նա ունի ինչպես վստահորդի, այնպես էլ՝ դատարանի հետ հարաբերություններում: Մասնավորապես, դատարանի հետ փաստաբանի հարաբերությունների կանոնակարգմանն է նվիրված Կանոնագրքի 4.1 կետը, որը, լինելով բլանկետային իրավադրույթ՝ հղում է պարունակում փաստաբանի և դատարանի հարաբերությունները կարգավորվող այլ իրավական ակտին, տվյալ դեպքում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին:

Սույն գործի շրջանակներում իրավական նշանակություն ունեն փաստաբանի հետևյալ դատավարական պարտականությունները՝ ներկայանալ վարույթ իրականացնող մարմնի՝ տվյալ դեպքում՝ դատարանի կանչով, ենթարկվել դատական նիստը նախագահողի օրինական կարգադրություններին և առանց դատական նիստը նախագահողի թույլտվության՝ չլքել դատարանի դահլիճը, եթե չի հայտարարվել ընդմիջում: Սույն պարտականությունների չկատարումը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածի 1-ին մասի, հանդիսանում է անհարգալից վերաբերմունք դատարանի նկատմամբ:

Փաստաբանի դատավարական պարտականությունները կազմում են նրա իրավական կարգավիճակի կարևոր մասը, քանի որ փաստաբանն ունի կրկնակի առաքելություն՝ մի կողմից պաշտպանել իր վստահորդի շահերն օրենքով չարգելված բոլոր միջոցներով, իսկ մյուս կողմից նպաստել դատարանի կողմից պատշաճ արդարադատության իրականացմանը: Վերջինս կարող է իրացվել, եթե փաստաբանն

ըստ պատշաճի պահպանում է դատավարական ընթացակարգի կանոնները, իր վարքագծով նպաստում է դատարանի կողմից գործի արագ և օբյեկտիվ քննությանը: Դա ներառում է նաև փաստաբանի կողմից դատարանի օրինական կարգադրություններին և դատական նիստի սահմանված կարգին անշեղորեն հետևելը՝ այդպիսով դատարանի նկատմամբ ցուցաբերելով հարգանք, որպիսի պարտականությունը նրա վրա դրված է ինչպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, այնպես էլ՝ Կանոնագրքով:

Խորհրդի նիստում Պատասխանող Տիգրան Հայրապետյանը նշել է, որ այդպիսի վարքագիծ է դրսևորել, քանի որ ներգրավված չի եղել որպես պաշտպան: Տիգրան Հայրապետյան նշել է, որ որպես պաշտպան ներգրավվել է 2017թ. հոկտեմբերի 13-ին, ինչը հաստատվում է 13. 10. 2017թ. դատական նիստի արձանագրությամբ:

Խորհուրդը գտնում է, որ թեև դատարանի սանկցիայի (որոշման) մեջ Տիգրան Հայրապետյանի կարգավիճակը նշված է որպես պաշտպան, սակայն փաստաբան Տիգրան Հայրապետյանի կողմից ներկայացված 30.10.2017թ. դատական նիստի արձանագրությամբ այլ բան է հաստատվում:

Հետևաբար, Պալատի խորհուրդը գտնում է, որ պատասխանող Տիգրան Հայրապետյանը՝ չունենալով պաշտպանի կարգավիճակ հնարավորություն չի ունեցել օգտվել իր իրավունքներից, ինչն էլ հանդիսացել է պատճառ դատական նիստին չներկայանալու համար:

Խորհուրդը այս պայմաններում արձանագրում է, որ Պատասխանող Տիգրան Հայրապետյանը հարկադրված է եղել դիմել նման ծայրահեղ քայլի, քանի որ՝ չունենալով պաշտպանի կարգավիճակ հնարավորություն չի ունեցել օգտվել իր իրավունքներից:

Ուստի, Կանոնագրքի 4.1 կետի խախտման մասով Տիգրան Հայրապետյանի նկատամամբ կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Խորհրդի նիստի ընթացքում Պատասխանող Արայիկ Պապիկյանը նշել է, որ այդպիսի վարքագիծ է դրսևորել, քանի որ ներգրավված չի եղել որպես պաշտպան:

Խորհուրդն արձանագրում է, որ Պատասխանող Արայիկ Պապիկյանի կողմից չի ներկայացվել դատարանի՝ Արայիկ Պապիկյանին պաշտպան համարելու հետ կապված որոշումը ժխտող այնպիսի ապացույց, որից Խորհուրդը կգար հետևության, որ Արայիկ Պապիկյանը չի ունեցել պաշտպանի կարգավիճակ:

Նշվածի հաշվառմամբ Խորհուրդը գտնում է, որ Պատասխանող Արայիկ Պապիկյանը 2017թ. հունիսի 30-ի ժամը 16:30-ին նշանակված դատական նիստին չի ներկայացել առանց որևէ հարգելի պատճառի:

Խորհուրդը գտնում է, որ Պատասխանող Արայիկ Պապիկյանը թույլ է տվել Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտում:

Կարգապահական տույժի ընտրությունը

Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը:*

Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

Անդրադառնալով նշանակվելիք կարգապահական տույժի տեսակին՝ Պալատի խորհուրդը՝ հաշվի առնելով վերոհիշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը և փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները, գտնում է, որ փաստաբան Արայիկ Պապիկյանի նկատմամբ պետք է կիրառել տույժ՝ խիստ նկատողության ձևով:

7.2 Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի խախտման մասով.

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով:*

Սույն իրավադրույթի նորմատիվ էությունը կայանում է նրանում, որ փաստաբանը, ելնելով իր իրավապաշտպան գործառույթից, պարտավոր է դրսևորել իր նշված գործառույթով պայմանավորված հասարակական հատուկ կարգավիճակին հարիր ազնիվ վարքագիծ վստահորդի հետ հարաբերություններում և առավելագույն ջանքեր գործադրել իր վստահորդի շահերը բոլոր օրինական միջոցներով պաշտպանելու ուղղությամբ:

Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական գործի քննության ընթացքում չեն ներկայացվել այնպիսի ապացույցներ, որոնցով կհաստատվեր Պատասխանողների կողմից Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի խախտում թույլ տալու հանգամանքը: Ուստի, Խորհուրդը գտնում է, որ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի խախտման մասով կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.- րդ հոդվածի 5-րդ մասի, 39.8.-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 39.9.-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ՀՀ Փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 30-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Արայիկ Պապիկյանին (արտոնագիր 970) ճանաչել մեղավոր Կանոնագրքի 4.1 կետի խախտման համար:

2. Փաստաբան Արայիկ Պապիկյանի (արտոնագիր 970) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն:

3. Պալատի նախագահի 10.08.2017թ. թիվ 229-Ա/ԿԳ-17064 որոշմամբ փաստաբան Արայիկ Պապիկյանի (արտոնագիր 970) նկատմամբ հարուցված

կարգապահական վարույթը «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի մասով կարճել:

4. Պալատի նախագահի 10.08.2017թ. թիվ 229-Ա/ԿԳ-17064 որոշմամբ փաստաբան Տիգրան Հայրապետյանի (արտոնագիր 159) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել:

5. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Հրանտ Անանյան

03 ապրիլի 2018թ.
թիվ ԿԳ/60-Ա
<u>ք</u>. Երևան